25.759

Ոչ պակ N 186

ԴԵՊԻ ԿՈՐՊԵՐԱՑԻԱ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ—ԿԱՆԱՆՑ ԿՈՐՊԵ-ՐԱՑԻԱՅԻ ՄԵՋ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С. С. Р.

Հրատարակություն ՀԱՅԿՈՐՊ-ի

ԵՐԵՎԱՆ 1926

334
Դ-39

ԳՆԵՑԵՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑԵՔ

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Լույս են տեսել)

1. **Տիխոմիրով.**—*Ինչպես անել, վոր կոոպերատիվի գործերը լավանան—գունավոր շապիկով, 32 յերես, գինն է 20կ.*

2. *Կոոպերատիվի առաջին քայլերը. գունավոր շապիկով, 40 յերես—գինն է 30 կոպեկ.*

3. **Պ. Ֆոլյաճ.**—*Գյուղացի՛, ուժեղացրու կոոպերացիան—20 յերես, նկարազարդ շապիկով—գինն է 5 կոպեկ։*

4. **Հ. Տ. Մ.**—*Ինչպես պետք է լինի կոոպերատիվի գործակատարը—22 յերես, նկարազարդ շապիկով—գինն է 8 կոպ.*

5. *Ինչպես պիտի հիմնել կոոպերատիվ խանութ—24 յերես, գինն է 10 կոպեկ։*

6. **Պոժիտնով.**—*Ինչպես պետք է հաշիվ տա սպառողական ընկերության վարչությունը—26 յերես, գինն է 15 կոպեկ։*

7. **Պ. Ֆոլյաճ.**—*Կորչեն չարչիները—16 յերես, պատկերազարդ, գինն է 8 կոպեկ։*

8. **Շեյնճ.**—*Մուրհակ—26 յերես, գինն է 30 կոպեկ։*

9. **Կերժենցեվ.** — *Կազմակերպիր ինքդ քեզ—56 յերես, գինն է 35 կոպեկ։*

10. **Ոստրովսկայա.**—*Կոոպերացիան ինչո՞ւ համար է պետք գյուղացուն—գինն է 25 կոպեկ։*

11. **Դենիսով.**—*Կազմակերպեցեք խանութային հանձնաժողովներ—գինն է 20 կոպեկ։*

№425 334 Ռ-39 Ս-1984 15 ... Ցանկ № 186.

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ԴԵՊԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ—ԿԱՆԱՆՑ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԵՋ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրատարակություն ՀԱՅԿՈՈՊ-ի

ՅԵՐԵՎԱՆ 1926

2 APR 2013

25.759

60629·67

Գրառ. № 419 բ. Տիրաժ 1000. Պատվ. № 2675.
Տպագրական Տրեստի 2-րդ տպարան, Երևան։

Պ. ՖՈՒՅԱՆ

ԴԵՊԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Չի կարելի չնկատել, որ մեր սպառկոոպերացիան հսկայական նվաճումներ է կատարել իր տնտեսության ասպարիզում, ամրապնդելով իր ֆինանսական ուժը, մեծացնելով ապրանքաշրջանառությունը և լավացնելով իր տեխնիկան ու առևտրական ապպարատը. բայց սրա հետ միասին նկատելի է նաև մի ուրիշ, ոչ պակաս կարևոր, ոչ պակաս ուրախալի նվաճում, որ է՝ կազմակերպչական աշխատանքի աշխուժացումը և կուլտկրթական աշխատանքներին մոտենալը։

Մեր կոոպերատիվ ցանցում աշխատողների գիտակցության մեջ վերջին տարվա ընթացքում մի բեկում է կատարվել՝ կոոպերացիայի նկատմամբ առևտրական-չարչիական վերաբերմունքից դեպի կոոպերացիայի կուլտուրական խնդիրների ու նպատակների գիտակցումը։

Ոչ բոլոր տեղերում, բայց արդեն վորոշ կոոպերատիվներ սթափվել են, ձեռնարկել են կազմակերպչական ու կուլտկրթական ծրագրված աշխատանքի։ Ցերբեմն այդ արվել է գիտակցաբար, յերբեմն էլ սթափվող ու իր վարչությունից իր կուլտուրական կարիքների համար բավարարում պահանջող փայատերերի ճնշման ներքո։

Բայց մի ասպարիզում մեզ մոտ դեռ ևս խավարն է տիրապետում։ Մինչև իսկ ամոթ է խոստովանելը, որ մենք մինչև այսոր լուրջ միջոցների չենք ձեռնարկել՝ կանանց մասսան կոոպերացիային մասնակից անելու և ակտիվացնելու խնդրում։ Այս է պատճառը, որ մեր յերկրում չափազանց փոքր է կոոպերացիայի անդամ-կանանց տոկոսը։

Ել չեմ խոսում այն մասին, որ մեզ դեռ չի հաջողվել հաղթահարել մինչև իսկ մեր կոոպերատոր տղամարդկանց պահպանողականությունը, վորպեսզի՝ կոոպերացիայի վարչական ու ստուգիչ մարմիններին, ինչպես և փորձնական աշխատանքներին մասնակից անելու նպատակով կանանց առաջ քաշելու աշխատանքը տար քիչ թե շատ դրական արդյունքներ։

Մեր լիազորակար ժողովների լոզունգներն ու դեկլարացիաները մնացել են անկատար։

Մենք մինչև իսկ քիչ թե շատ ճիշտ տեղեկություններ չունենք կանանց կոոպերացման մասին։

Կանանց կոոպերացիայի մեջ քաշելու հարցն այնքան է անտես արվել, վոր մեր կոոպերատիվ ցանցը մինչև իսկ չի ցանկացել նրանց հաշվառման յենթարկել։

Այսպես է յեղել, բայց այսպես չպետք է մնա։

Գուցե առանց նոր դեկլարացիաների ու լոզունգների մեր քաղաքի և գյուղի կոոպերատորները կը գիտակցեն իրենց պարտքը և այդ պարտքի կատարումին կանցնեն։

Նոր լոզունգների կարիք չկա։

Վոչ մի գրագետ մարդ և մանավանդ կոոպերատորը, նոր կյանքի այդ կառուցողը, չի կարող չիմանալ Ի.Լենինի հիմնական ավանդները։

Առանց կնոջ մեծ կոոպերատիվ հասարակակարգ չեն ստեղծի։

Այս պետք է հիշել, այս պետք է գիտակցել, սրանով պետք է ղեկավարվել։

Յեթե կոոպերացիայի տնտեսական ուժի մասին դատում են ըստ նրա շրջանառության, ըստ նրա կապիտալի և ըստ նրա բալանսի ընդհանուր գրության, ապա կոոպերացիայի ավելի խոր բովանդակության, նրա իսկական դեմքի մասին,—այն մասին, թե ինչ չափով նա իրոք կոոպերացիա է, ինչ չափով նա իրոք կրում ու տարածում է սոցիալիզմի գաղափարներն ու գործնական աշխատանքը—այս ամենի մասին թերևս անսխալ կերպով կարելի եր յեզրակացություն հանել նաև կոոպերացիային մասնակցող կանանց տոկոսով։

Ընկեր կոոպերատորներ!

Ընթացիկ տարվա մեջ մենք պետք է մեծ յեռանդով իրականացնենք մի մեծ գործ—կանանց կոոպերացիայի մեջ գրավելու գործը։

Այս գրքույկում ժողովված թեզիսներն ու ծրագրերը կոգնեն ձեզ այդ գործի տեխնիկական ու կազմակերպչական-խնդիրներում միայն։

Իսկ գլխավորը կախված է ձեզանից։

Դուք պետք է մտածեք, ըմբռնեք, յուրացնեք և կոոպերատորի նման, համառորեն, յեռանդուն կերպով ու հեղափոխական վոգեվորությամբ պետք է ձեռնարկեք մեր այդ անմիջական, կարևոր ու մեծ պարտականության կատարմանը։

ՅԵՆՏՐՍՈՅՈՒԶԻ ՀՐԱՀԱՆԳԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿԱՆԱՆՑ ԴԵՊԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԳՐԱՎԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Կին փայատերերի փոքր տոկոսը՝ մանավանդ գյուղերում, անհրաժեշտ և հրամայողական է դարձնում կանանց դեպի կոոպերացիան գրավելու աշխատանքը։ Կանանց դեպի կոոպերացիան գրավելու համար անհրաժեշտ է.

1. Ագիտացիայի յենթարկել և կյանքում կիրառել կանանց արտոնյալ պայմաններով կոոպերացիային անդամագրելու սկզբունքը՝ սահմանելով փայավճարի գանձման յերկար ժամկետներ։ Փայատերերի կանանց անդամագրել մուտքի վճարը ընդունելով և փայավճարը մթերքով կատարած աշխատանքի հանդեպ ստանալիք աշխատավարձից գանձելով։ Ինչպես և փայատերերի կանանց փայավճարները գանձելով գնումներից արվող զեղչերից։

2. Ուժեղացնել և մեծացնել աշխատավոր կանանց տնտեսական շահագրգռվածությունը՝ նրանց մասնակից դարձնելով ապրանքների ասսորտիմենտի ընտրությանը — խանութային հանձնաժողովների միջոցով։ Կանանց մասնակից դարձնել մոր և յերեխայի անկյուններ ու դարակներ կազմակերպելու գործին, ինչպես նաև այն հիմնարկների կազմակերպման գործին, վորոնք կոչված են թեթևացնելու գեղջկուհու աշխատանքը (մսուրներ, բժշկական խորհրդատվություններ, մանկական հրապարակներ և այլն)։

3. Հնարավորին չափ մեծ քանակությամբ՝ կանանց գրավել խանութային հանձնաժողովների մեջ, կապ հաստատելու համար սպառողուհիների և կոոպերացիայի միջև, ինչպես և վերացնելու համար կոոպերատիվի թերությունները։

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋ ՔԱՇԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

1. Անհրաժեշտ է աշխատավոր կանանց առաջ քաշել կոոպերատիվի ընտրական որգաններում (գլխավորապես խանութային հանձնաժողովներում) աշխատելու համար, ինչպես նաև տեխնիքական աշխատանքներ հանձնելու իմաստով (գրասենյակում, մսուրում, կնոջ ու յերեխայի անկյունում, մանկական հրապարակներում, խանութում և այլն)։ Բացի այդ՝ անհրաժեշտ է առաջ քաշել և ավելի պատասխանատու աշխատանքներ հանձնարարել այն կանանց, վորոնք կոոպերատիվ աշխատանքում ցույց են տվել հառաջադիմություն և հաջողությամբ կատարել են իրենց հանձնարարված պարտականությունները։

2. Առաջ պիտի քաշել այնպիսի աշխատավոր կանանց— բանվորուհիների ու գեղջկուհիների—վորոնք ավելի ակտիվ ու պատրաստված են, անցել են պատգամավորական ժողովների կոոպերատիվ սեկցիաներից և աչքի յեն ընկել իրենց հասարակական աշխատանքով։

3. Առաջ քաշվող գեղջկուհիների թեկնածուն մասսաների մեջ պետք է ունենա վորոշ հեղինակություն և ամեն անգամ պետք է թեկնածությունը համաձայնեցվի համապատասխան որգանների հետ (կուսակցական կոմիտեներ, արհմիություն, կոմսոմոլ և այլն)։

4. Կոոպերացիայի վարչական կամ ընտրական մարմիններում աշխատելու համար առաջ քաշվող աշխատավոր կանանց կոոպերատիվ աշխատանքի հետ կապելու, նրանցից գործունյա աշխատողներ պատրաստելու համար՝ անհրաժեշտ է համապատասխան աշխատանք տալ նրանց՝ հանձնելով վորոշ կոնկրետ անելիքներ և քաշելով նրանց կոոպերացիայի հերթական առորյա աշխատանքների մեջ։ Նման աշխատողուհիների համար պետք է ստեղծել աշխատանքի ընկերական պայմաններ, և պետք է պարբերաբար հրավիրել ակտիվ աշխատողների խորհրդակցություններ։

5. Աշխատավոր կանանցից ավելի վորակավորված և կոոպերատիվային հարցերում ավելի պատրաստի աշխատակիցներ պատրաստելու նպատակով՝ անհրաժեշտ է 1) գործադրել պրակտիկանությունը թե վարձով և թե առանց վարձատրության, 2) պատգամավորական ժողովների կոոպերատիվ սեկցիաներում աշխատանքներ տանել, 3) ավելի մեծ քանակությամբ աշխատավորուհիներ գրավել դեպի կոոպերատիվ կուրսերն ու դպրոցները։

6. Խանութային հանձնաժողովները պետք է աշխատեն վոչ միայն բարձրացնել կանանց ինքնագործունեությունը և վոչ միայն պետք է մոտեցնեն կոոպերացիան աշխատավորուհիներին այլ և դպրոց պետք է դառնան կոոպերատոր-պրակտիկանտուհիների համար, վորոնց միջից աշխատավորուհիներ պետք է առաջ քաշվեն՝ ավելի պատասխանատու աշխատանքների համար։

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Այս ասպարիզում կոոպերացիայի աշխատանքը պետք է արտահայտվի՝

ա) Կոոպերատիվ հիմունքներով աջակցել մանկապարտեզների, մսուրների, մանկական հրապարակների կազմակերպմանը և այլն։ Աջակցել այդ հիմնարկների համար միության միջոցներից, ինչպես և բանվորների կենցաղի բարելավման համար տրվող միջոցներից ու սպառողական ընկերության ոգուտներից հատկացումներ անելուն։

բ) Ընդարձակել հացթուխարանների, լվացարանների, ճաշարանների կազմակերպությունը, եժանացնել ճաշերի արժեքը, ինչպես նաև ոգնել այդ կազմակերպությունները կոոպերատիվ հիմունքներով կազմակերպելուն։

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Կին աշխատավոր մասսաների կոոպերատիվ անգրագիտությունը մեծ արգելակ է հանդիսանում կանանց կոոպերացման խնդրում և մեր առաջ պահանջ է դնում, վոր կոոպերատիվ լուսավորությանը զարկ տանք հետևյալ հիմնական ուղղություններով։

1. Բանվորուհիների, գեղջկուհիների, ինչպես և բանվորների կանանց միջև պետք է տարվի կոոպերատիվ խնդիրների մասսայական պրոպագանդ։ Դրա հետ միասին պետք է բացա-

տրել և պարզաբանել այն նշանակությունը, որ ունի «կանանց մասնակցումը կոոպերացիային»։

2. Տղամարդկանց միջև ևս անհրաժեշտ է պրոպագանդ մղել և հասկացնել նրանց, թե ինչ նշանակություն ունի կանանց մասնակցումը կոոպերացիային, որովհետև հաճախ բանվորներն ու գյուղացիներն իրենց կանանց արգելում են կոոպերացիային անդամագրվել և այդպիսով թուլացնում են կանանց հոսանքը դեպի կոոպերացիան։

3. Անհրաժեշտ է կանանց գրավել դեպի բանակումբներին ու գյուղական խրճիթ-ընթերցարաններին կից կոոպերատիվ խմբակները, ինչպես նաև անհրաժեշտ է ինքնուրույն կոոպերատիվ խմբակներ կազմակերպել բանվորուհիների, գեղջկուհիների և բանվորների կանանց համար։

4. Անհրաժեշտ է մեծ քանակությամբ կանայք գրավել դեպի կոոպերատիվ տեխնիկումները, դպրոցները և կարճատև ու յերկարամյա կոոպերատիվ դասընթացները։

5. Անհրաժեշտ է պատգամավորական ժողովների կոոպերատիվ սեկցիաների աշխատանքներն՝ ուժեղացնել այդ սեկցիաների տալով մասնագետ կոոպերատոր ղեկավարներ։

6. Անհրաժեշտ է սիստեմատիկ կերպով, ինչպես կուսակցական, այնպես ել արհեստակցական ու հասարակական մամուլում լուսաբանել այն աշխատանքը, որ կատարում է կոոպերացիան աշխատավոր կանանց շրջանում։ Այս աշխատանքի վրա պիտի դարձնել կոոպթղթակիցների ուշադրությունը և այս նույն նպատակի համար պետք է ստեղծել բանվոր ու գեղջկուհի կոոպթղթակցուհիների կադր։

Վարչության անդամ՝ **Տեր**

Կազմբաժնի վարիչ՝ **Փաշկեվիչ**

Աշխատ. կանանց կոոպերացման
հրահանգիչ կոնսուլտանտ՝ **Բուտուզովա**

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՑԱՆՑԻՆ՝

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Գեղջկուհիներին սպառկոոպերացիայի աշխատանքներում ակտիվ մասնակից դարձնելու նպատակով, ինչպես նաև կոոպերատիվի ու աշխատավոր կանանց միջև ավելի սերտ կապ ստեղծելու համար՝ կոոպերատիվ ցանցում կիրառվելու է գեղջկուհիների պրակտիկանտությունը։

Պրակտիկանտուհիները առաջ են քաշվում գեղջկուհիների պատգամավորական կամ ընդհանուր ժողովների կողմից։ Պրակտիկանտուհիների կցումն անհրաժեշտ է համաձայնեցնել կոոպերատիվի վարչության հետ և ձևակերպել վարչության արձանագրված վորոշմամբ։

3. Պրակտիկանտները պետք է առաջ քաշվեն փայատերերից կամ փայատերերի ընտանիքներից։

4. Պրակտիկանտները սպառողական ընկերության խանութներին կցվում են հետևյալ հաշվով. մեկ պրակտիկանտուհի 3-ից պակաս գործակատար ունեցող խանութներում և 2-ից մինչև 3 պրակտիկանտուհի՝ ավելի ուժեղ կոոպերատիվներում։

5. Ամեն մի պրակտիկանտուհու համար փորձնական աշխատանքների ժամկետ է նշանակվում մեկ տարի։

Ծանոթություն.— Պրակտիկանտուհիներին աշխատանքից հեռացնելու իրավունքը վերապահվում է կոոպերատիվի վարչությանը՝ այն կազմակերպության հետ միասին, որ պրակտիկանտուհուն առաջ է քաշել։

6. Պրակտիկանտուհին սպառողական ընկերության մեջ աշխատանք է կատարում առանց վարձատրության և իր հիմնական աշխատանքից ազատ ժամերին։

7. Պրակտիկանտուհիների աշխատանքը ղեկավարում է Վարչության անդամներից մեկը կամ ընկերության պատասխանատու աշխատողներից մեկը՝ վարչության հանձնարարությամբ։

Ծանոթություն.— Պրակտիկանտուհիները հսկիչ (վերստուգիչ) ոչ մի իրավունք չունեն։

I ՊՐԱԿՏԻԿԱՆՏՈՒՀԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

1. Ավելի սերտ կապ ստեղծելու համար և կոոպերատիվ աշխատանքին ավելի մոտ ծանոթանալու նպատակով՝ պրակտիկանտուհիներին հետևյալ իրավունքներն են տրվում։

ա) Այցելել վարչության և վերստուգիչ հանձնաժողովի նիստերին։

բ) Ներկա լինել լիազորների ժողովներին։

գ) Մասնակցել կոոպերատիվին վերաբերվող բոլոր ժողովներին ու խորհրդակցություններին (խանութային հանձնաժողովների խորհրդակցություններին և այլն)։

դ) Մասնակցել կոոպերատիվում տեղի ունեցող բոլոր քննություններին։

Ծանոթություն.— Բոլոր նիստերի ժամանակ պրակտիկանտուհիներն ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

2. Իրենց պրակտիկանտության ընթացքում պրակտիկանտուհիները պետք է ծանոթանան հետևյալ խնդիրներին.

ա) Սպառողական ընկերության կանոնադրությանը. a) ընկերության ղեկավար մարմինների կառուցվածքին, b) Սպառողական ընկերության անդամ ընդունվելու և փայավճարներ մուծելու կարգին, c) անդամների իրավունքներին ու պարտականություններին։

բ) Անդամների թվի շարժմանը և անդամուհիների թվի տոկոսային հարաբերությանը անդամների ընդհանուր թվին։

գ) Փայադրամագլխի վիճակին. a) ինչքան փայավճար է մուծված, b) ամեն մի անդամին վերքան փայավճար է գալիս, c) դեռ յեվս վերքան է պակասում՝ փայավճարների լրիվ քանակը գանձելու համար։

դ) Մուրհակի նշանակությանը և այն հանգամանքին,

թե կոոպերատիվի առևտրի վրա ինչպես է անդրադառնում փայատերերի պարտապան լինելը. որինակ՝ յեթե անդամի չմուծված ամեն մի ռուբլի փայավճարի համար կոոպերատիվը տալիս է ամսական 8%, քանի վոր ստիպված է ավելացնել ապառիկ գնումները, ապա այդ դեպքում ինչպիսի տոկոս է ստացվելու բոլոր չմուծված փայավճարների զումարից)։

յե) Զքավոր շերտերը կոոպերացման յենթարկելու ժամանակ գործադրվող արտոնությունների նշանակությանը. a) փայավճարը մաս-մաս մուծելը, b) մթերքով փայավճար մուծելը, c) փայավճարը գնումների համար տրվող պարգևատրումից գանձելը, d) փայավճարների գանձումը կոոպերատիվի ստացած ոգուտից և այլն։

զ) Փայատերերի և հատկապես փայատիրուհիների ակտիվ մասնակցության նշանակությանը— փայատերերի ու փայատիրուհիների մասնակցությունը ընտրական ժողովներում, խանութային հանձնաժողովների աշխատանքներում և ուրիշ ոժանդակ մարմիններում։

II ՊՐԱԿՏԻԿԱՆՏՈՒՀԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

1. Պրակտիկանտուհիները պետք է.

ա) Ծանոթանան ապրանքի ասսորտեմենտին՝ փորձնականորեն ապրանքի տեսակները ջոկել կարողանան հենց ապրանքների նմուշներով. ուսումնասիրեն ամենանպատակահարմար դասավորումը խանութում, ի նկատի առնելով գնորդների հարմարությունը և վարժվեն գործակատարի հաջող աշխատանքին, ապրանքները փչացումից ապահովելու իմաստով։

բ) Ծանոթանան մետրական կշռաչափերով ապրանքներն ուղիղ կշռելու և փաթեթներ կազմելու աշխատանքին։

գ) Ուսումնասիրեն քաշի պակասորդներն ու տարան և հատկապես գործարանային փաթեթները։

դ) Ծանոթանան չորացումներից ու պակասումներից առաջացող պակասորդի ընդունված չափերին։

յե) Ծանոթանան ապրանքները ստանալու և գնահատելու կանոններին, ինչպես նաև մնացորդների ստուգման տեխնիկային։

զ) Ուսումնասիրեն անդամագրքույկներում գրանցումներ կատարելու ձևը։

ե) Ծանոթանան գործակատարի կալողության (պարտականությունների) չափին և գործակատարին վերաբերվող հրահանգներին։

2. Վերստուգիչ հանձնաժողովի հանձնարարությամբ պետք է մասնակցեն ապրանքների մնացորդների ստուգման աշխատանքներին։

3. Պետք է մասնակցեն սպառողական ստացած ապրանքների քննության ու ընդունմանին։

III. ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Կոոպերատիվում նկատված բոլոր պակասությունների (ծախվող ապրանքների վատ հատկությունը, ապրանքների վատ ընտրությունը, ապրանքների գների անհամապատասխանությունը շրջանի առևտրական այլ հիմնարկների գներին, ծառայողների դեպի գնողներն ունեցած անքաղաքավարի վերաբերմունքը, խանութի հակասառողջապահական վիճակը և այլն) կամ չարաշահությունների մասին պրակտիկանտուհին իր նկատած պակասությունները հաղորդում է վարչությանը՝ համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար։

Ծանոթություն.—Պրակտիկանտուհին չի կարող ինքնագլուխ վոր և է կարգադրություն անել կոոպերատիվի աշխատակիցներին։

IV. ԿՈՈՊԼՈՒՍՎԱՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Պրակտիկանտուհիները մասնակցում են խրճիթ-ընթերցարանին կից կոոպերատիվ խմբակների աշխատանքին, ինչպես նաև ակտիվ մասնակցում են կոոպերատիվ բոլոր կոմպանիաներին։

2. Պրակտիկանտուհիները ծանոթանում են (վորտեղ կան) գրականության դարակներին, «մոր և յերեխայի» անկյանը, ուսումնասիրում են կոոպերատիվի այս ճյուղերի նկատմամբ ընակչության կողմից հանդսեբերվող պահանջները և վարչության

առաջ հարցեր են դնում՝ այդ աշխատանքները լավացնելու համապատասխան միջոցներ գտնելու իմաստով։

3. Պրակտիկանտուհիները մասնակցում են մասնական հրապարակների կազմակերպման գործին. իսկ վորտեղ այդպիսիները չկան՝ աջակցում են նրանց առաջանալուն. նման հարցեր են դնում փայտերերի ընդհանուր ժողովներում և այդ խնդիրներում իրենց աշխատանքը կապում է գյուղխորհրդի փոխոգկոմի և այնպիսի կազմակերպությունների հետ, վորոնք շահագրգռված են տվյալ հիմնարկների բացմամբ։

4. Պրակտիկանտուհիներն աջակցում են կոոպերատիվ գրականության տարածմանը—գրականության դարակների և պատգամավորական ժողովների միջոցով—ինչպես և՝ ըստ հնարավորության, տեղական կոոպերատիվ կյանքը լուսաբանում են գյուղացիական կամ կոոպերատիվ թերթում՝ վորպես թղթակցուհի։

V. ՊՐԱԿՏԻԿԱՆՏՈՒՀՈՒ ԿԱՊԸ ՄԱՍՍԱՅԻ ՀԵՏ

1. Պրակտիկանտուհին, ամսական վոչ պակաս մեկ անգամից՝ պետք է հաշվետու լինի գյուղի գյեղջկուհիների ընդհանուր ժողովի առաջ և իր պրակտիկանտության ժամանակաշրջանում վոչ պակաս մեկ անգամից՝ պետք է զեկուցի կոոպերացիայի ակտիվ աշխատող կանանց շրջանային ժողովում։

2. Պրակտիկանտուհին պետք է աջակցի կանանց կոոպերացման գործին՝ ագիտացիայի, պատգամավորական ժողովների, զրույցների, վարչության հանձնարարությունների և այլ միջոցներով։

VI. ՊՐԱԿՏԻԿԱՆՏՈՒՀԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Պրակտիկանտության ժամանակաշրջանի վերջում ընկերության վարչությունն իր յեզրակացությունը հայտնում է այն կազմակերպությանը, վորի կողմից պրակտիկանտուհին ուղարկվել է։

2. Գործնական աշխատանքում ընդունակություններ հայտ-

նաբերած պրակտիկանտուհուն անհրաժեշտ է առաջ քաշել սպառ-
կոոպերացիայի ավելի պատասխանատու մարմիններում աշխա-
տելու համար։

Թանոթություն.—Վորպեսզի գործնական աշխա-
տանքներում հառաջադեմ պրակտիկանտուհիները կա-
րողանան ձեռք բերել նաև տեսական պատրաստու-
թյուն, վարչություններին խորհուրդ է տրվում ըստ
հնարավորին ուղարկել նրանց՝ կոոպերատիվ դասն-
թացներում սովորելու։

Ցենտրոսայուզի վարչության նախ. տեղակալ՝ **Տեր-Ցեղլազարյան**

Կազմբաժնի վարիչի տեղակալ՝ **Մաշկեվիչ**

Կանանց կոոպերացիայի մեջ գրավելու
հրահանգիչ-կոլսուլտանտ՝ **Փուկովա**

---

12. **Ռիկով.**—*Գյուղը, տնտեսական նոր քաղաքականությունն ու կոոպերացիան—36 յերես, գինն է 25 կոպեկ։*

13. **Ա. Վ. Մարտովսկի.**—*«Խափանվեց». պիես 3 գործողությամբ—10 յերես, գինն է 15 կուպեկ։*

14. **Ալով.**—*Վոջիլների դեմ կռվելու միջոցը. պիես 3 գործողությամբ.—32 յերես, գինն է 25 կոպեկ։*

15. **Գրեխով.**—*Ինչպես հավաքել փայավճարները—24 յերես գինն է 15 կոպեկ.*

16. **Գործակատարի հաշվառումը** *28 յերես, գինն է 30 կ.*

17. **Զայանով.**—*Կոոպերացիայի համառոտ դասընթաց—80 յերես, գինը 40 կ.։*

18. **Շալով.**—*Հաշվապահության համառոտ ձեռնարկ, 161 յերես, գինը 2 ռ.։*

19. **Խիժնյակով.**—*Սովորեցեք քննություն կատարել—96 յերես գինն է 70 կ.։*

20. **Ակկոդուս.**—*Ինչպես պետք է առեվտուր անել—28 յերես, գինն է 25 կ.։*

21. **Ցիցգովատով.**—*Ի՞նչ պետք է իմանալ ընկերության կանոնադրությունից—32 յերես, գինն է 25 կ.։*

22. **Դեպի կոոպերացիա.** *Հրահանգներ կանանց կոոպերացիայի մեջ գրավելու մասին։*

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
ЕССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0210188

Ca 198
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР
№ 81
807